

Ձվածև դիմանկարը



Exported from Wikisource on 08/25/20

Ձվաձև դիմանկարը

[Էդգար Ալան Պո](#)

[40]

ՁՎԱՁԵՎ ԴԻՄԱՆԿԱՐԸ

Այն դոյակը, որտեղ, իր վիրավոր տիրոջն անօթևան չթողնելու համար, ներխուժեց իմ սպասյակը, ճոխության ու մաղձի այն կուտակումներից մեկն էր, որոնք դարերով խոժոռվում են Ապենինյան լեռներում ոչ միայն տիկին Ռադրիֆիուս երևակայության մեջ, այլև իրականում: Ըստ իս այն լքել էին բոլորովին վերջերս և միայն ժամանակավորապես, այնպես որ մենք որոշեցինք հանգրվանել ամենից փոքր ու անշուք սենյակում, որը գտնվում է դոյակի հեռավոր աշտարակներից մեկում: Սենյակի հարդարանքը ճոխ էր, բայց բավական հին ու մաշված: Գորգերով ծածկված պատերին բազմապիսի գեներ ու գրահ էր կախված, ինչպես նաև բազմաթիվ ժամանակակից նկարներ՝ ոսկեզօծ շրջանակներով: Այդ նկարները, որոնք կախված էին ոչ միայն պատերին, այլև նման կառույցների համար անխուսափելի բազմաթիվ խորաններում, չափազանց հետաքրքրեցին ինձ, թեև դրա պատճառը գուցե ինձ մոտ սկսվող տենդն էր: Արդեն մթնում էր, և ես

Պեղորոյին խնդրեցի փեղկերը փակել, վառել անկողնու մոտ դրված աշտանակի մոմերը և ետ քաշել ամպհովանու թավշյա սև վարագույրը: Եթե ինձ չհաջողվեր քնել, ես գոնե կկարողանայի գբաղվել նկարներով և դրանք թվարկող ու քննող մի փոքր հատորյակով, որը գտել էի բարձիս տակ: Ես երկար ու կլանված կարդում էի այդ գրքուկը, նույնքան երկար ու ակնապիշ դիտում պատերին կախված նկարները: Ժամանակն արագ ու աննկատելի էր անցնում՝ շուտով արդեն ուշ գիշեր էր: Մոմակալի դիրքն ինձ դուր չէր գալիս, և ես, սպասյակիս չարթնացնելու համար, ձեռքս պարզեցի և այն դրի այնպես, որ գիրքն ավելի լավ լուսավորվեր:

Այդ տեղափոխությունը բոլորովին անսպասելի արդյունք տվեց: Բազմաթիվ մոմերի լույսն ընկավ մինչ այդ աննշմարելի մի խորանի մեջ, որն առաջ քողարկված էր ամպհովանու սյուններից մեկի ստվերով: Պայծառ լույսի տակ երևաց մի նկար, որը ես մինչ այդ չէի տեսել: Դա մի դեռատի, կանացի փթթումի շեմին կանգնած աղջկա դիմանկար էր: Մի հպանցիկ հայացք նետելով այդ նկարին, ես հապճեպ փակեցի աչքերս: Սկզբում ինքս էլ չհասկացա, թե ինչու այդպես վարվեցի: Հետո, փակ աչքերով պառկած, գտա պատճառը: Ես պարզապես ուզեցել էի ժամանակ շահել, հանոզվել, որ իմ տեսողությունն ինձ չի խաբել, սանձել երևակայությունս հանուն ավելի սթափ ու վստահ հայացքի: Քիչ անց նորից ուշադիր նայեցի նկարին:

Այս անգամ ես չէի կարող և չէի էլ ուզում կասկածել, որ ճիշտ եմ տեսնում: Մոմերի ցուրը կտավի վրա ցրել էր այն քնկոտ ընդարմացումը, որն աստիճանաբար բթացնում էր զգայություններս, և իսկույն արթնացրել էր ինձ:

Ինչպես արդեն ասացի, դա մի դեռահաս կնոջ դիմանկար էր: Նրա գլուխը և ուտերը պատկերված էին այն զարդանկարային եղանակով, որը հիշեցնում էր Սալլիի սիրած կանացի գլխիկների ոճը: Թևերը, կուրծքը և նույնիսկ լուսավայլ մազերն ասես ձուլված լինեին այն անորոշ, բայց խորը ստվերին, որը կազմում էր նկարի հիմնագույնը: Ոսկեգօծ ձվաձև շրջանակն առատորեն զարդարված էր մավրիտանական հյուսքով: Նկարը հիրավի անգերագանցելի էր որպես կերպարվեստի կատարյալ նմուշ: Բայց ոչ նկարչի վարպետությունը և ոչ էլ պատկերված դեմքի երկնային գեղեցկությունը չէին կարող այդպես խորն ու հանկարծակի ցնցել ինձ: Բացառվում էր նաև, որ իմ կիսաբթուն երևակայությունը կենդանի կին պատկերացրած լիներ: Նկարի ուրվագիծը, ոճը, շրջանակը պիտի որ իսկույն ցրած լինեին նման տպավորությունը, ավելի ճիշտ, պետք է ընդհանրապես կանխած լինեին այն: Մի ամբողջ ժամ, երևի, ես անցկացրի այդ մասին խորհելով, թիկնած իմ բերանին, և հայացքս նկարին հառած: Վերջապես, գտնելով այդ անսովոր ազդեցության գաղտնիքը, ես գոհունակությամբ ետ ընկա անկողնուս մեջ: Նկարի հմայքը նրա կատարյալ

շնչավորության մեջ էր, որը սկզբում
ցնցեց, ապա շփոթեցրեց, ընկճեց ու
ահաբեկեց ինձ: Խորին
երկյուղածությամբ ու ակնածանքով
լցված, ես մոմակալն իր նախկին տեղը
դրի: Վերացնելով այդպիսով իմ
խռովության պատճառը, ես իսկույն
դիմեցի նկարները մեկնաբանող
գրքույկին: Գտնելով ձվաձև դիմանկարի
համարը, ես կարդացի հետևյալ
տարօրինակ ու առեղծվածային
պատմությունը:

«Նա անգուգական գեղեցկությամբ
օժտված մի օրիորդ էր, նույնքան
հմայիչ, որքան և գվարթ: Չախորդ եղավ
այն օրը, երբ նա տեսավ ու սիրեց
նկարչին և դարձավ նրա կինը:
Նկարիչը համատ էր, անգիջում ու
մոլեռանդ և արդեն պսակված էր
Արվեստի հետ: Աղջիկն օժտված էր
անգուգական գեղեցկությամբ, հմայիչ
էր, գվարթ և ասես հյուսված լիներ
լույսից ու ժպիտներից: Եղնիկի պես
կայտառ մի էակ էր նա և սիրում ու
գուրգուրում էր ամեն բան — ատելով
միայն իր ախտյան Արվեստը, սոսկալով
միայն վրձնից, երփնապնակից և նման
չարագուշակ պիտույքներից, որոնք
խլում էին իրենից իր սիրելիին:
Ինչպիսին պիտի լիներ ուրեմն իր
սարսափը, երբ մի օր նրան հայտնի
դարձավ, նույնիսկ իր ջահել կնոջը
դիմանկարելու նկարչի ցանկությունը:
Բայց նա խոնարհ ու հնազանդ կին էր և
երկար շաբաթներ նստեց բարձր
աշտարակներից մեկի մութ մի
սենյակում, ուր գունատ կտավը
լուսավորվում էր միայն վերևից ծորացող
դալուկ լույսով: Նկարիչն անգուսպ էր ու

քմահաճ և բոլորովին հափշտակված էր իր գործով, որը երկար ժամեր ու օրեր էր տևում: Ստեղծագործ մոլուրյամբ տարված, նա չէր ուզում տեսնել, որ մենավոր աշտարակի դժգույն լույսը հյուծում է իր կնոջ մարմինն ու հոգին, և բոլորն էին դրա վկան, բացի նկարչից: Իսկ նրա կինը շարունակ ժպտում էր և չէր տրտնջում, քանի որ զգում էր, որ նկարիչը (անդին լայն ճանաչում ունեցող) ինքնամոռաց հաճույք է ստանում իր գործից, պատկերելով իրեն այդքան սիրող, սակայն օրեցօր նվազող ու հանգչող Էակին: Եվ իրոք, նրանք, ովքեր տեսել էին կտավը, շշուկով էին խոսում այն ապշեցուցիչ նմանության մասին, որը, հաստատելով կատարման հմտությունը, միևնույն ժամանակ վկայում էր նկարչի անհուն սերը դեպի նա, ով նկարում արդարև պատկերված էր անօրինակ ներշնչանքով: Սակայն հետո, երբ գործն արդեն իր ավարտին էր մոտենում, ոչ ոք այլևս իրավունք չստացավ աշտարակ մտնել, իսկ նկարիչը, աշխատանքի մարմաջով բռնկված, սակավ էր հայացքը պոկում կտավից նույնիսկ իր կնոջը նայելու համար: Նկարիչը չէր ուզում տեսնել, որ կտավին դրած իր երանգները նա խլում է դիմացը նստած Էակի այտերից: Վերջապես, շատ շաբաթներ անց, երբ վրձնի սոսկ մեկ հարված էր մնացել շուրթերին և մի նուրբ երանգ աչքի մոտ, տիկնոջ հոգին նորից, մոմի բոցի պես, մի պահ բռնկվեց: Հենց այդ պահին էր, որ վրձինը քավեց կտավին, վերջին երանգը գտավ իր տեղը, և նկարիչը, գմայլված իր գործով, մի պահ անշարժացավ կտավի առաջ: Հետո նա հանկարծ գունատվեց, երերաց ու, բացականչելով՝

«Հիրավի սա ինքը կյանքն է», կտրուկ
դարձավ սիրելիի կողմը — ՆԱ
ՄԵՌԱԾ ԷՐ»:

About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](http://wikisource.org)^[1]. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](http://creativecommons.org/licenses/by-sa/3.0)^[2] license or, at your choice, those of the [GNU FDL](http://www.gnu.org/copyleft/fdl.html)^[3].

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)^[4].

The following users contributed to this book:

- GeoO

-
1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)
 2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0)
 3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)
 4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)